

Կիսամյակային ամփոփիչ հարցաշար գրականությունից / 8-րդ դաս./
Տարբերակ I

1. Խ. Աբովյանի հիմնած պանսիոնում ո՞ր գրողն է աշակերտել նրան:
ա/ Հ.Թումանյան բ/ Ե. Չարենց գ/ Բաֆֆի դ/ Գ.Սունդուկյան
2. Նշված թատերգություններից ո՞րը չի գրել Գ.Սունդուկյանը:
ա/ <<Պատվի համար >> գ/ <<Պեպո>>
բ/ <<Էլի մեկ գոհ>> դ/ <<Քանդած օջախ>>
3. Ո՞րը թատերգության տեսակ չէ:
ա/ պոեմ բ/ կատակերգություն գ/ դրամա դ/ ողբերգություն
4. Ո՞ր պնդումն է ճիշտ:
ա/ Էփեմիան ճաշկերույթին հրավիրում է նաև Զիմզիմովի աղջկան և փեսային:
բ/ Բարաթը գտնվում էր թելի կծիկի մեջ:
գ/ Պեպոն հաշտվում է Զիմզիմովի հետ:
դ/ <<Պեպո>>-ն կատակերգություն է:
5. Ձախ կողմում ստեղծագործության հերոսների անուններն են , իսկ աջում՝ նրանց խոսքերը: Դեմ դիմաց գրի՛ր ճիշտ տարբերակները:
ա/ Լևոն - <<Էս քո կոտրած ձեռքով չի՞ս գրել>>:
բ/ Գևորգ - <<Եթե քրդերը թողնեին գյուղացու վաստակը իր ձեռքին մնար>>:
գ/ Պեպո - <<Ամեն մարդ պարտավոր է պատվել գեղարվեստը>>:
դ/ Վարդան - <<Ես կատակ չեմ անում ,պարո՛ն, ես փականագործ եմ>>:
6. Որտե՞ղ է ծնվել Պետրոս Դուրյանը:
ա/ Գյումրի բ/ Թիֆլիս գ/ Կոստանդնուպոլիս դ/ Փարիզ
7. Ո՞ր կրթօջախում է սովորել Պ. Դուրյանը:
ա/ Սկյուտարի ճեմարան գ/ Խ.Աբովյանի պանսիոնը
բ/ Ներսիսյան դպրոց դ/ Գևորգյան ճեմարան
8. Ո՞ր պնդումն է սխալ
ա/ Դուրյանին անվանել են Սկյուտարի սոխակ:
բ/ Դուրյանը գրել է ն՝ արևելահայերեն, ն՝ արևմտահայերեն:
գ/ <<Լճակ բանաստեղծության մեջ հեղինակը օգտագործել է գեղարվեստական միջոցներ՝ հռետորական հարց և հռետորական դիմում:
դ/ <<Տ րտունջք>>-ն ավարտվում է <<Աստուծո ծաղրն է Աշխարհն ալ արդեն> տողով:
9. <<Մնաք բարովի>>-ի խոսքով ու՞մ է դիմում բանաստեղծը:
ա/ Աստված և արև գ/ փթիթներ գարնան
բ/ աստղեր և լուսին դ/ գաղտնապահ տերևք
10. Գրել հոմանիշները:
Խորշ, եղեմ, մոլար, քուրա, դյուրեղ, բույլ, սերովբե, դպիր, խալիս, դավթար:
11. Գրի՛ր բաց թողնված տողը:
Այլ եթե գոգո՞ւլ թափին

Նմանին չես կրնար դուն
Հոգվույս ՝որ է բոց անհուն:

12.Ո՞ր պնդումն է սխալ :

ա/ Մուրացանը հնագույն հայկական նախարարական տոհմերից մեկի անունն է:

բ/ Մուրացանը չի գրել պատմական թեմայով ստեղծագործություններ:

գ/ <<Առաքյալը>>, <<Նոյի ագռավը>> վիպակներ են:

դ/ Հայ մեծատունները չեն կատարում են իրենց տված խոստումը:

13.Ո՞ր շարքի բոլոր հերոսներն են <<Հասարակաց որդեգիրը>>պատմվածքից:

ա/ դարբին Ղազար, Թամար, Ելիզավետա

բ/Շուշան, Ռուզան, Շառլոտա

գ/ Տանպետյանց , Սլաքյան, Կակուլի

դ/ Գուստավ, Դուդուկջյան, Վարդան

14. Որ պնդումն է սխալ:

ա/Պարոն Գուստավի աղջիկը նորա՝ Գևորգի զգացմունքը չէր բաժանում:

բ/ Շառլոտան սիրում էր նրան իբրև յուր հոր գործարանի աշխատասեր և պարկեշտ գործավորի:

գ/ Սոմարյանցի տանը հավաքված գումարը հանձնեցին պատանի փականագործին:

դ/Մորը մենակ չթողնելու միտքը հետ պահեց Գևորգին ինքնասպանության փորձից:

15.Ո՞րը գրական մեթոդ չէ :

ա/գաղափարապաշտություն գ/ մորթապաշտություն

բ/դասականապաշտություն դ/իրապաշտություն

16.Աջ և ձախ կողմերում նշվածները համապատասխանեցնել :

ա/ Դուրյան ա/ Փայաջուկ

բ/ Մուրացան բ/ Սկյուտար

գ/Բաֆֆի գ/ Շամախի

դ/Շիրվանզադե դ/ Շուշի

17.Ո՞ր պնդումն է սխալ Շիրվանզադեի վերաբերյալ:

ա/Ծնվել է Բաքվում:Հայրը զբաղվում էր նաև առևտրով:

բ/Մորաքրոջ որդին էր դերասան Աբեյանը:

գ/Նա ոչնչացնում է նավթային քաղաքի մասին վեպը՝ թողնելով մի հատված:

դ/ Շիրվանզադեին շնորհվել է ժողովրդական գրողի կոչում:

18.Գրական ո՞ր մեթոդի հետևորդն է Շիրվանզադեն;

ա/ ռեալիզմ բ/ աթեիզմ գ/ կլասիցիզմ դ/ ռոմանտիզմ

19.Ո՞ր շարքի բոլոր տեղանուններն են << Արտիստը >> պատմվածքից:

ա/ Օդեսա, Մադրիդ, Իտալիա ,Բեսարաբիա

բ/Փարիզ , Միլան, Հայաստան, Մոսկվա

20. Երկուսից երեք նախադասությամբ բնութագրի՛ր Լուիզային :/

Կիսամյակային ամփոփիչ հարցաշար գրականությունից / 8-րդ դաս./
ՏԱՐԲԵՐԱԿ II

1. Նշված հեղինակներից ո՞վ էր, որ բեմ հանեց իրական մարդկային կյանքը թե՛ ծիծաղաշարժ և թե՛ դրամատիկ լարվածությամբ:

ա/ Շիրվանզադե բ/ Սունդուկյան գ/ Սայաթ - Նովա դ/ Բաֆֆի

2. Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է «Պեպոն»:

ա/ դրամա բ/ վիպակ գ/ ողբերգություն դ/ կատակերգություն

3. Ո՞ր պնդումն է սխալ:

ա/ Դրաման իր մեջ ներառում է և՛ ողբերգական, և՛ կատակերգական դրություն:

բ/ Կատակերգությունը առաջացնում է ծիծաղ, ցավ և ծաղրուծանակ:

գ/ Թատերգության երկի սկզբում տրվում են գործող անձանց անունները:

դ/ «Պեպոն»-ի առաջին և երրորդ արարվածները կատարվում են Պեպոյի տանը:

4. Ո՞չարքում են միայն «Պեպոն» - ի հերոսները:

ա/ Վարդան, Կեկել, Գիգոլի գ/ Ալմաստ, Պեպո, Էփեմիա

բ/ Կակուլի, Զիմզիմով, Սամսոն դ/ Գիքո, Լևոն, Շուշան

5. Ձախ կողմում ստեղծագործության հերոսների անուններն են, իսկ աջում՝ նրանց խոսքերը: Դեմ դիմաց գրի՛ր ճիշտ տարբերակները:

ա/ Թամար ա/ «Մեր դրացի դարբին Ղազարի որդին է»:

բ/ Ալմաստ բ/ «Բաս էն ի՞նչ էր ասում, թե փուղիքս հաշա իս ուտում»:

գ/ Էփեմիա գ/ «Ի՞նչ գործ ունիս գերմանացու աղջկա հետ»:

դ/ Սոմարյանց դ/ «Պարոնը բժի՞շկ է»:

6. Որտե՞ղ է ծնվել Բաֆֆին:

ա/ Սկյուտար բ/ Թիֆլիս գ/ Շուշի դ/ Փայաջուկ

7. Ո՞ր շրջասությունն է վերաբերում Պետրոս Դուրյանին:

ա/ Որսկանի թոռ բ/ Անմահ մահկանացու գ/ Սկյուտարի սոխակ դ/ Ազգային սոխակ

8. Ո՞ր պնդումն է սխալ:

ա/ Դուրյանը Վարդուկյան թատրոնում նաև դերասանություն է արել:

բ/ Դուրյանը ներշնչվում է ֆրանսիացի բանաստեղծների գործերով:

գ/ «Սիրելի», «Դրժելի», «Էլի գարուն կգա» բանաստեղծությունները Դուրյանինն են:

դ/ «Սիրելի»-ը կազմված է ճերկտողերից և 5 վեցյակներից:

9. «Տրտունջքը» գրելուց մեկ օր հետո գրեց ո՞ր բանաստեղծությունը:

ա/ «Իմ ցավը» բ/ «Լճակ», գ/ «Ջղջում», դ/ «Դրժելի»

10. Գրել հոմանիշները:

Մրափ, խոնջացած, տրտունջք, հյուլե, սյուք, խոկալ, սերովբե, արգավանդ, դավթար, խալիս:

11. Ո՞րն է «Լճակ» բանաստեղծության բաց թողնված տողը:

Որքան ունիս դու ալի՛

Ճակատս այնքան խոկ ունի,

Միրտս այնքան խոց ունի բյուր:

12. Ո՞ պնդումն է ճիշտ:

ա/ Մուրացանը ծնվել է Թիֆլիսում:

բ/ Բաֆֆին գրել է «Գևորգ Մարգարետունի» պատմավեպը:

գ/ Դուրյանը գրել է միայն բանաստեղծություններ:

դ/ Շիրվանզադեն ծնվել է 1858թ. ապրիլի 7-ին:

13. Ո՞ր շարքի բոլոր հերոսներն են «Արտիստը» պատմվածքից:

ա/ Ստեֆանիա, Իցկո, Ալմաստ, Լևոն

բ/ Լուիզա, Ստեֆանիա, Կավալարո, Գուստավ

գ/ Գևորգ, Սամսոն, Սոմարյանց, Ռաիսա

դ/ Շուշան, Ալմաստ, Շառլոտա, Չաուշենկո

14. Ո՞ր պնդումն է սխալ:

1. Թամարը անհանգստացավ, երբ որդին հայտարարեց, թե այլևս գործարան չի գնալու:

2. Տանպետյանցին սաստիկ զայրացրեց կնոջ՝ Ելիզավետա Սերգեննայի արարքը:

3. Լևոնը կառամատույցում տխրեց, երբ լսեց, որ Լուիզային դիմավորելու է Կավալարոն:

4. Գևորգը ուրիշ գործարան չմտավ, քանի որ Սոմարյանցի տանը նրան հասկացրել էին, որ նա մեծ մարդ է:

15. Նշվածներից ո՞րը գրական մեթոդ չէ:

ա/ գաղափարապաշտություն

գ/ դասականապաշտություն

բ/ բնապաշտություն

դ/ իրապաշտություն

16. Համապատասխանացնել աջ և ձախ կողմերում նշվածները:

ա/ Շիրվանզադե

ա/ Թիֆլիս

բ/ Բաֆֆի

բ/ Շամախի

գ/ Սունդուկյան

գ/ Սալմաստ

դ/ Մուրացան

դ/ Շուշի

17. Ո՞ր պնդումն է ճիշտ:

ա/ «Արտիստը» պատմվածքի գլխավոր հերոսը՝ Լևոնը, ծնվել էր Հայաստանում:

բ/ Լուիզան սիրում էր Լևոնին, բայց հանուն իր ապագայի նախընտրեց Կավալարոյին:

գ/ Շիրվանզադեն գրել է միայն պատմվածքներ և թատերգություններ:

դ/ Ցարական կառավարությունը Շիրվանզադեին մեղադրում էր հակաթուրքական գործունեության մեջ:

18. Ո՞ւմ խոսքերն են .

«Շիրվանզադեն կմնա այն հեղինակը, որը տանում է մեր գրականությունը Եվրոպա»:

19. Ո՞ր շարքի բոլոր տեղանուններն են «Արտիստը» պատմվածքից:

ա/ Օդեսա, Մադրիդ, Լտալիա, Բեսարաբիա

բ/ Փարիզ, Միլան, Ուկրաինա, Մոսկվա

20. Երկու նախադասությամբ բնութագրի՛ր Լևոնին: